ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2023 թվականի կարիքների համար «ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի» ներդրման ծրագրով նախատեսված օժանդակ տեխնիկական միջոցների ձեռքբերման «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2023/14» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «03» օգոստոսի 2023թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Կարեն Գրիգորյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կապի և փոստի վարչության կապի բաժնի պետ

հանձնաժողովի անդամներ՝

Սամվել Հարությունյան՝ «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր տնօրենի տեղակալ

Կոնստանտին Կուրբանյան՝ «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր տնօրենի խորհրդական

հանձնաժողովի քարտուղար՝

Դիանա Գրիգորյան՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գնումների բաժնի գլխավոր մասնագետ

1. Տեղեկատվություն՝ «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2023/14» ծածկագրով ընթացակարգի շրջանակում «ՍԻՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանության շտկման և հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ.

«ՍԻՈՒՆ» ՍՊԸ հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունները: Մասնակցի կողմից շտկված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակցի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց՝

1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել **«ՍԻՈՒՆ» ՍՊԸ-ին**

2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել **«ՆՈԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին,**

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել համապատասխան պայմանագիր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝

_____ **Կարեն Գրիգորյան**

Անդամներ՝

_____ **Սամվել Հարությունյան**

_____ **Կոնստանտին Կուրբանյան**

Քարտուղար՝

_____ **Դիանա Գրիգորյան**